



18

ԽՕՍԷ՝ ՀԱՅԵՐԷՆ

«Խօսմակ», պարբերաթերթ Հ. Բ. Ը. Միութեան Լիբանանի շրջ. Յանձնաժողովի, 1960ի, Յունուարի թիվով, Գ. տարի, պրակ Բ. (ԺԶ), իր ընթերցողներուն կը ներկայացնէ զեղեցիկ քերթուած մը, ազգային չէն շունչով գրուած. խորագիրն է «Ո՛վ Հայ, խօսէ հայերէն»։ Քերթուածը տպուած է թերթին կողքին վրայ։ Հոն կը յանձնարարուի հայորդիին՝ խօսիլ հայերէն, ծնունդէն մինչեւ մահ, տան մէջ՝ թէ շուկայի վրայ, օտարին հետ՝ թէ եղբորը, նոյնիսկ Աստուծոյ հետ։

Կեցցե՛ս, բարեկամ - ըսի մտքէս. բայց յանկարծ բառը սառեցաւ շրթունքիս վրայ՝ երբ ստորագրութիւնը տեսայ։ ԺԱԳ Ս. ՅԱՅՈՒԲԵԱՆ։ Ի՛նչ. ժազ-ին հայերէնը չկա՞յ. եւ ժազ-ը ելած հայերո՞ւն քարոզ պիտի կարգայ՝ որ հայերէն խօսին. քարոզը՝ աղէկ, բայց այդ ստորագրութեամբ կրնայ զառնալ Ձայն բարբառոյ յանապատի։

Սիրելի՛ ժազ. դուն իսկ կը գրես «քերանցի», գրաւոր ու մտովին, հոգեւին, միշտ Հայերէն դուն խօսէ, ի սէր մեր մեծ Անցեալին, որ իր հողին տակ ննջող մեր նախնիքները ցնծա՛ն...»։

Ի սէր այդ բոլորին, նաեւ ի սէր «Մեծա-սքանչ»ին, հրաժարէ՛ այդ ժազ-էն եւ դուն ալ բոլոր համեստ հայորդիներուն նման գրէ Յակոբ, որ հայ հողին տակ ննջող մեր նախնիքները ցնծա՛ն...»։

Նոյն պարբերաթերթին 44րդ էջին վրայ երկրորդ քերթուած մըն ալ ունի նոյն հեղինակը «Հայր, հայերէն սովորեցուր» խորագրով. պիտի ուզէինք որ յաջորդով ուրիշ քերթուած մըն ալ գրէր, «Հայր, հայերէն մկրտէ» խորագրով, որպէսզի բոլոր հայազգի հայերն ու մայրերը հայե-

րէն անուններ դնեն իրենց զաւակներուն «ի սէր մեր մեծ Անցեալին»։

Փոքրիկ զիտողութիւն մըն ալ. այդ սովորեցուր ձևը (երկու անգամ՝ զործածուած նոյն ոտանաւորին մէջ) հինցած է այլեւս. հարկ է գրել ընդհանրացած ձևով՝ սորվիլ - սորվեցուր։

Ճիշտ է որ սովոր - սովորիմ ձևէն կը կազմուի սովորիլ. սակայն ետեւառաջ փոխադրութեամբ - երեւոյթ մը՝ որու յաճախ կը հանդիպինք լեզուներու, մանաւանդ զաւառաբարբառներու մէջ - եղած է սորվիլ, եւ այս ձևով որպէսզի գրուած է գրականութեան մէջ։

ԲԵՂՈՒՆ - ԲԵՂՆԱՒՈՐ

Շատեր կը գրեն բեղմնաւոր. առ ալ ճիշտ է. ունինք երկու բառեր բեղմն եւ բեղուն. երկուքն ալ գոյական են գրաբարի մէջ. աշխարհաբարի մէջ է որ երկրորդը, բեղուն, միայն ածականի նշանակութիւն առած է, իբր պտղաւէտ, արդիւնաւոր։

Հետեւաբար շատ լաւ կարելի է բեղմն բառը (որ ոսկեղարեան ալ չէ, այլ աւելի ուշ չըջանի յայտնուած բառ մըն է), թողուլ հնութեան ծոցը, եւ գործածութեան դնել միայն բեղուն բառը, որմէ բեղմնաւոր, բեղմնաւորութիւն, թէ՛ իրական եւ թէ՛ այլաբանական նշանակութեամբ։

Բուսաբանութեան մէջ կը բացատրուի թէ ինչ է բեղուն փոշին, որ կը պարունակէ ծաղիկներու արական սերմիկները. առոնց պաշտօնն է բեղմնաւորել, այսինքն արդիւնաւործել, սերնդազործել. գործը՝ բեղմնաւորութիւն։

Այլաբանական իմաստով, հոգեկան արժէքներու մասին խօսելով՝ գիտենք զերուստեւ մեծամեծ անձերու բեղուն գործունէութիւնը, բեղմնաւոր կեանքը. այսինքն անոնց արդիւնաշատ վաստակները։ Ուստի գրեցէ՛ք անվարան բեղուն - բեղմնաւոր - բեղմնաւորութիւն։

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ս Տ Ա Յ Ա Ծ Ե Ն Ք

ԱՆՈՎԵԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ. - Վէրք Հայաստանի։ - Պատմական վէպ։ - Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 222 (մեծադիր, պատկերազարդ)։

ԱԹԱՅԱՆ Ռ. Ա. - Հայկական խաղային նոտագրութիւնը (ուսումնասիրութեան եւ վերածանութեան համար)։ Երեւան, ՀԱՍՈՒ ԳԱ Հրտ. 1959, էջ 285։

ԱՂԱԲԱԲԵԱՆ Ս. - Գուրգէն Մահարի։ Երեւան, ՀԱՍՈՒ ԳԱ Հրտ. 1959, էջ 151 (փոքրադիր)։

ԱՃԱՌԵԱՆ ՀՐ. - Լիակատար քերականութիւն Հայոց լեզուի, համեմատութեամբ 562 լեզուների։ Հատոր Գ. գիրք Ա. Երեւան, ՀԱՍՈՒ ԳԱ Հրտ. 1959, էջ 591։

ԳԱՐԲԻԼԵԱՆ Հ. - Հայ փիլիսոփայական մտքի պատմութիւն. հատոր Գ. Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 495։

ԴԵՄԻՐՃԵԱՆ ԴԵՐԵՆԻԿ (1877-1956). - Բերդի-գրաֆիա (խմբագրութեամբ և առաջարկով Հր. Մուրադեանի)։ Երեւան, ՀԱՍՈՒ Միասնիկեանի անուն Պետ. Գրադարանի Հրտ. 1957, էջ 95։

ԿԱՐԱ ՄՈՒՐԱՅԱ ՔՐԻՍՏԱՓՈՐ. - Համառոտ բերդիգրաֆիա (կազմեց Ն. Ա. Թէյմուրազեան)։ Երեւան, ՀԱՍՈՒ Միասնիկեանի անուն Պետ. Գրդ. Հրտ. 1956, էջ 93։

ԿՈՒՐՏԱՍ (Սողոմոնեան Սողոմոն Գեորգ) - Բերդիգրաֆիա (հաւաքեց եւ կազմեց Ն. Ա. Թէյմուրազեան)։ Երեւան, ՀԱՍՈՒ Միասնիկեանի անուն Պետ. Գրդ. Հրտ. 1957, էջ 112։

ՀԱՅ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ. - Դաշնամուրի նը-ւագայիցութեամբ։ Կազմեց եւ խմբագրեց Շաբաժաւան։ Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 149 (մեծադիր)։

ՀԱՅ ԺՈՂՈՎԴԴԿԱՆ ՀԵՔԻՍԹԵՐ. - Ընդհանուր խմբագրութեամբ ակադեմիկոս Յովսէփ Օրբելու։ Երեւան, ՀԱՍՈՒ ԳԱ Հրտ. 1959, Հտ. Ա. էջ 670, Հտ. Բ. էջ 659։

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԻՍՏՈՐԻԵՍԸ - Յօդուածների ժողովածու։ Երեւան, ՀԱՍՈՒ ԳԱ Հրտ. 1958, էջ 227։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ Ջ., ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Օ. - Հայաստանի տուֆերը եւ մարմարները։ Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 142 (մեծադիր)։

ՂԱԶԱՐԵԱՆ ՅՈՎՀ. - Ազատ Վշտունի։ Երեւան, ՀԱՍՈՒ ԳԱ Հրտ. 1959, էջ 111 (փոքրադիր)։

ՄՈՒՐԱԴԵԱՆ Ն. - Արմէն Արմէնեան։ Երեւան, ՀԹԸ Հրտ. 1959, էջ 119 (փոքրադիր)։

ՅԱՅՈՒԲԵԱՆ Թ. Խ. - Երեւանի պատմութիւնը (1801-1879 թթ.)։ Երեւան, Համալս. Հրտ. 1959, էջ 671։

ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ ՍՈՒՐԷՆ. - Գարբիէլ Սունդուկեան - մենագրութիւն։ Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 509։

ՇԻՐՎԱՆՁԱԴԷ ԱՂԵՔԱՆԴԻՐ (1858-1958). - Բերդիգրաֆիա (խմբագրութիւն եւ առաջարկ Հր. Ս. Թաւրազեանի)։ - Երեւան, ՀԱՍՈՒ Միասնիկեանի անուն Պետ. Գրդ. Հրտ. 1959, էջ 242։

ՋԻՎԼԵՐԻ. - Ջիվանու Քնարը (կազմեց, համեմատեց եւ ծանոթագրեց Ազատ Սահակեան)։ Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 794։

ՍԱՐԳՍԵԱՆ Ս. - Ամո խորագեան։ Երեւան, ՀԹԸ Հրտ. 1959, էջ 102 (փոքրադիր)։

ՍԱՐԳՍԵԱՆ Խ. Ա. - Նալբանդեանի գրական ստեղծագործութիւնը։ Երեւան, ՀԱՍՈՒ ԳԱ Հրտ. 1959, էջ 213։

ՍԱՐԳՍԵԱՆ ՍԱՔՈ. - Պետրոս Դուրեան։ Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 142 (փոքրադիր)։

ՍԵՒԱԿ ՊԱՐՈՅՐ. - Անուշի զանգակատուն։ Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 270։

ՍՈՂՈՄՈՆԵԱՆ Ս. - Արգի պոեզիայի մի քանի հարցերը։ Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 325։

ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆ ՌՈՒԲԵՐՏ. - Գրականութեան մասին։ Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 247։

ՎԱՐԴԱՆԵԱՆ ՍՈՂՈՄՈՆ. - Հայկական ժողովրդական քնակիչ տների ճարտարապետութիւն։ Պատմական ակնարկ։ Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 130 (մեծադիր)։

ՎԵՐՄԻՇԵԱՆ Ա. Մ. - Դիվանեան Հ. Խ. - ՍԱՆԱԶԵԱՆ Մ. Բ. - Հայաստանի պոուզները։ Հատոր Ա. Կորիզաւորներ։ Երեւան, Հայպետհրատ, 1958, էջ 243 (մեծադիր)։

ՓԱՓԱՉԵԱՆ ՅԱՅՈՒԲ Դ. - Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը։ Ա. Հրովարտակներ։ Պրակ Բ. (1601-1650 թթ.)։ Երեւան, ՀԱՍՈՒ ԳԱ Հրտ. 1959, էջ 593։

ՓԱՓԱՉԵԱՆ ՎԱՀՐԱՄ. - Սրբի Պարտքը։ Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 173 (փոքրադիր)։

ՕՐԱՐ ԽԱՅԱՄ. - Քառականներ։ Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 242 (փոքրադիր)։

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

Խաղային համար . . .	3000 Լիր
Արտատնական համար . . .	6 Տարբ
Մեկ թիւ՝ 250 Լիր -	0,50 Տարբ

PRIX DE L'ABONNEMENT ANNUEL

Pour l'Italie . . .	3000 Lires
Pour l'Etranger . . .	6 Dollars
Le Numéro: 250 Lires -	0,50 Dollars

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti - Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
 Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia
 Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia

